

## 5 առավել հաճախ տրվող հարցեր

1. Ո՞ր ռիսկերն է ծածկում անշարժ գույքի ապահովագրությունը, որոնք՝ ոչ:

Անշարժ գույքի ապահովագրության փաթեթը ներառում է հետևյալ ռիսկերը.

1. Հրդեհ, կայծակ, գազի պայթյուն
2. Ջրի վնաս
3. Երկրաշարժ
4. Կոտրանքով գողություն, կողոպուտ
5. Երրորդ անձանց անօրինական գործողություններ

**Փաթեթը չի ներառում հետևյալ ռիսկերը.**

1. Ջրհեղեղ, հողմ, փոթորիկ, մրրիկ, կարկուտ,
2. Սողանք, լեռնային/քարային զանգվածների փլուզում

2. Որքա՞ն արժե բնակելի անշարժ գույքի ապահովագրությունը:

Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ վարկերով ձեռք բերված անշարժ գույքի համար վարկային պայմանագրի գործողության ընթացքում տարեկան ապահովագրության սակագինը կազմում է ապահովագրական գումարի 0.18%-ը:

3. Կարո՞ղ եմ արդյոք ձեռք բերել անշարժ գույքի մասնակի ապահովագրություն: Ինչպե՞ս է հաշվարկվում ապահովագրության հատուցումը:

Այո, Ղուբ կարող եք ձեռք բերել մասնակի ապահովագրություն: Գույքի արժեքի մի մասի չափով ապահովագրության դեպքում ապահովագրական հատուցումը կվճարվի ապահովագրական գումարի և գույքի ամբողջական շուկայական արժեքի համամասնությամբ:

4. Ինչպիսի՞ չհատուցվող գումարներ են կիրառվում անշարժ գույքի ապահովագրության դեպքում:

5. Ապահովագրական գումարի 1%, ոչ պակաս քան 100,000 ՀՀ դրամ
6. Երկրաշարժի դեպքում՝ ապահովագրական գումարի 2%

5. Կարո՞ղ եմ ձեռք բերել անշարժ գույքի ապահովագրություն, եթե չեմ հանդիսանում գույքի սեփականատեր:

Այո, անշարժ գույքի ապահովագրություն կարող եք ձեռք բերել նաև սեփականատեր չհանդիսանալու դեպքում:

Թարմացվել է՝ 17/01/2019 15:00